# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 մարտի 2024 թվականի № 135-Ա**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2024 թվականի մարտի 14-ի № ՆՄ/ԱԿ-2-5/8857-2024 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում քննվող թիվ 69104824 քրեական վարույթի շրջանակներում խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ համագործակցությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ համատեղ տունայց իրականացնելու, ընտանիքը տևական ժամանակ խիստ ուշադրության տակ պահելու, որևէ կասկածի դեպքում իրավապահ մարմինների հետ սերտ համագործակցելու, երեխաներին՝ «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում մասնագիտական ծառայություններ ապահովելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

1) ***Անուշ Ղահրամանյան*** - աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ,

2) ***Շավարշ Արտաշյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ,

3) ***Համլետինա Հալաբյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ,

4) ***Ժաննա Մկրտչյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական ծրագրերի, տեղեկատվության և առողջապահության բաժնի առաջատար մասնագետ, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի քարտուղար *(համաձայնությամբ)*,

5) ***Սաթենիկ Գևորգյան*** - աշխատանքային խմբի անդամ, միասնական սոցիալական ծառայության Աբովյանի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի ավագ սոցիալական աշխատող *(համաձայնությամբ)*,

6) ***Գոհար Պողոսյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աբովյանի թիվ 7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հոգեբան, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Իրավական և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ, Աբովյան համանքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամ *(համաձայնությամբ)*,

7) ***Վահե Գևորգյան*** - աշխատանքային խմբի անդամ, «UOU մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ծրագրային քաղաքականության իրականացման «Կոտայք» մասնաճյուղի ընտանիքների ամրապնդման սոցիալական կենտրոնի համակարգող *(համաձայնությամբ)*,

8) ***Սուսաննա Գրիգորյան*** - աշխատանքային խմբի անդամ, «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության Աբովյան համայնքի գրասենյակի սոցիալական աշխատող *(համաձայնությամբ)*:

2. Աշխատանքային խմբին՝ յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո, հնգօրյա ժամկետում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացնել համապատասխան տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ա. ԱԱՀՈՎՅԱՆ**

**2024 թվականի մարտի 20**
**ք. Հրազդան**